Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
«19» մայիսի 2021 թվականի
թիվ 27 - Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐՄԱՎԻՐ – 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3
I. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԶՈՒՄ....4
II.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ....4
III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ....5
IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ....5
V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ....7
VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ....7
6.1. Կրթություն....7
6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր....9
6.3. Առողջապահություն....10
6.4. Սոցիալական պաշտպանություն....12
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ....13
7.1. Ճանապարհաշինություն....13
7.2. Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում....15
7.3. Գազամատակարարում....15
7.4. Էներգետիկա....16
VIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ....16
IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ....17
9.1. Տարածքային կառավարում....17
9.2. Տեղական ինքնակառավարում....17
9.3. Քաղաքացիական հասարակություն....18
9.4. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն....18
X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ....20
XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ....211
XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....21

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏԶՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՆԱԿ	Ներդրումների աջակցման կենտրոն
ՏԶ	Տարածքային զարգացում
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀՀ ԱԻՆ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

ՀՀ Արմավիրի մարզի զարգացման տեսլականն է՝ **2025 թվականին Արմավիրի մարզը կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ ունեցող և ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ է:**

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ **ռազմավարական նպատակները.**

1) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%,
2) Մինչև 2025թ. ՀՀ Արմավիրի մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում՝ 10%-ով,
3) Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանվել են զարգացման **երեք առաջնահերթ գերակայությունները.**

1) Արդյունաբերության աճ՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա, մասնավորապես վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների հիմնում/ընդլայնում,
2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում,
3) Տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2021 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է՝ առաջնորդվելով «Մարզային զարգացման ծրագրերի մշակում և իրականացում» 2008-2009թթ. մեթոդական ձեռնարկով:

Ծրագրի **նպատակներն են.**

1) համախմբել 2021 թվականի ընթացքում մարզում նախատեսվող բոլոր միջոցառումները՝ մարզի ռազմավարական նպատակների իրականացման համար,
2) ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում,
3) սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար:

2021 թվականի տարեկան գործունեության ծրագրում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման ընթացքին հետևելու է ՀՀ Արմավիրի մարզպետարանը: Ծրագրում ներառված են Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի, համայնքային բյուջեի միջոցներով, սուբվենցիոն ծրագրերով, վարկային ծրագրերով, մասնավոր ներդրումներով Արմավիրի մարզում 2021 թվականին նախատեսվող ծրագրերն ու միջոցառումները: Միաժամանակ արձանագրվել են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են ծրագրի մշտադիտարկման աշխատանքները:

I. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԶՈՒՄ

ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով տրված է աղքատության գնահատումը մարզում: Բացահայտվել են մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշվել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

2018թ. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով ՀՀ Արմավիրի մարզում աղքատ է համարվել բնակչության 23.5%-ը, որից ծայրահեղ աղքատ՝ 0.9%-ը, 2019թ. աղքատ է համարվել բնակչության 22.5%-ը, որից ծայրահեղ աղքատ՝ 1.2%-ը:

Համաձայն ՀՀ Արմավիրի մարզի զարգացման տեսլականի՝ խնդիր է դրվել ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ, ինչպես նաև ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

II. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ

Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից է:

Արմավիրի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են քաղաքային համայնքներում:

Մարզում առկա են նաև նախկին արդյունաբերական չօգտագործվող տարածքներ՝ հատկապես քաղաքային համայնքներում, ինչպես նաև Բաղրամյանի տարածաշրջանի համայնքներում: Մարզի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների մեջ դեռևս առկա է արդյունաբերական աշխատողների ներուժ, մարզում գերակա խնդիր է զարգացնել արդյունաբերությունը:

2021 թվականին ևս խնդիր է դրվում բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում՝ համագործակցելով Ներդրումների աջակցման կենտրոնի հետ և ներգրավելով տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

2021թ. ընթացքում կշարունակվեն Ներդրումների աջակցման կենտրոնի ծրագրերը՝

- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման դասընթացային փուլ,

- Ֆինանսական աջակցության տրամադրում,
- Խորհրդատվության տրամադրում:

ՀՀ վարչապետի 04.05.2021թ. «Հայաստանի Հանրապետությունում հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման, առաջնահերթությունների ցանկի կազմման եվ սահմանման կարգը, հանրային ներդրումային ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը, հանրային ներդրումային ծրագրի նախագծի մշակման և գնահատման օրինակելի ձևը հաստատելու մասին» N 472-Լ որոշմամբ սահմանված կարգով՝ նախատեսվում է մարզում սկսել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի մշակման գործընթացը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 25,000.0 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 2 մշտական և 3 ժամանակավոր աշխատատեղ:

III. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Մարզի ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա: ՀՀ Արմավիրի մարզում արդեն իսկ կան առանձին կազմակերպություններ, որոնք զբաղվում են հոգևոր-մշակութային և էթնիկ տուրիզմով և որոնց հաջողված փորձի տարածումը մարզի այլ համայնքներում կարող է նպաստել մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Ոլորտի թույլ կողմերից է՝ տուրիստական ենթակառուցվածքների՝ հյուրատների, հյուրանոցների, բարձրակարգ սպասարկման ծառայությունների բացակայությունը:

Մարզը համագործակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի, Ներդրումների աջակցման կենտրոնի, ինչպես նաև տեղական կազմակերպությունների հետ:

2021թ. պլանավորվում է մշակել զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված նոր ներդրումային ծրագրեր և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե՝ միջազգային կազմակերպություններին և արտերկրի ներդրողներին ներկայացնելու նպատակով:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. զբոսաշրջության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 5,000.0 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 5 ժամանակավոր աշխատատեղ:

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը՝ հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում:

Գյուղատնտեսության ոլորտի գերակայություններ են սահմանվել գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը, արդիականացումը, նորարարությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և խթանումը:

ՀՀ Արմավիրի մարզում 2021թ. գյուղատնտեսության ոլորտում կշարունակվեն իրականացվել հետևյալ պետական աջակցության ծրագրերը.

- «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի» պետական աջակցության ծրագիր,
- «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր,
- «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր,
- «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր»,
- «ՀՀ-ում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագիր»,
- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում», «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» և «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման» ծրագրեր,
- «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր»,
- «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր»,
- «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր»:

2021թ. կշարունակվի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ կառավարության 27.09.2018թ. N 1073-Ն որոշմամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող 1 ծրագիր (Ալաշկերտի խորքային հորի կառուցում՝ ոռոգման նպատակով - ՀՀ պետական բյուջե՝ 18747,6 հազ. դրամ):

2021թ. կշարունակվի Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ, համայնքների 10% համաֆինանսավորմամբ մարզում իրականացվող ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիրը, մասնավորապես՝ Ստորին-Հրազդանի մայր

ջրանցքի առավել վթարային հատվածների վերականգնում, մարզի ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնում՝ շուրջ 1,215.6 մլն դրամ գումարով:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

Հողաշինություն և հողօգտագործում. 2021թ. մարզի համայնքներում կիրականացվեն հողաշինարարական գործառույթներ՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխություններ, բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեքի փոխադրելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրում:

2021թ. գյուղատնտեսության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 6,849,770.8 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 14 մշտական և 115 ժամանակավոր աշխատատեղ:

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրներն են՝ ջրային պաշարների ոչ բավարար քանակությունը, անտառների բացակայությունը, մարզում աղբի կառավարման համակարգերի սահմանափակությունը, բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը բնապահպանական խնդիրների հետ կապված, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը, կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի բացակայությունը, կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակը, աղակալված հողերի առկայությունը, իսկ որպես սպառնալիքներ՝ ՀԱԷԿ-ի առկայությունը մարզում, մարդատար և բեռնատար տրանսպորտի բարձր խտությունը, ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտումը, կլիմայի փոփոխությունները՝ շոգ ամառների և խստաշունչ ձմեռների տևողության ավելացումը, տեղումների քանակի նվազումը, երաշտների առաջացման հնարավորությունների մեծացումը:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. բնապահպանության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 5,000.0 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 15 ժամանակավոր աշխատատեղ:

VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

6.1. Կրթություն

ՀՀ Արմավիրի մարզի կրթական համակարգում ընդգրկված են նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և միջին մասնագիտական) հաստատություններ:

2021 թվականին հանրակրթության ոլորտում շարունակվող ծրագրերն են՝

- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների և 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստումների շարունակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ռեսուրսների միջոցով,
- Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրման արդյունավետության ապահովում,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում և վկայագրում,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում հանրակրթության ինտեգրման գործընթացում, շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցություն, ոլորտում եղած լավագույն փորձի ներկայացում և տարածում,
- Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2021-2022, 2022-2023 և 2023-2024 ուսումնական տարիների նախնական կոմպլեկտավորումների կազմում և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացում,
- Առարկայական օլիմպիադների կազմակերպում,
- Դասագրքերով ուսումնական հաստատությունների ապահովում,
- 2021 թվականի ընթացքում «Դպրոցական տաք սնունդ» ծրագրի շրջանանկներում մարզի դպրոցների ընդգրկում,
- «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման գործընթացի շարունակականության ապահովում,
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,
- Համագործակցություն «Դասավանդիր Հայաստան» կրթական հիմնադրամի հետ,
- Համագործակցություն ՌԴ, Ֆրանսիայի, Գերմանիայի և ԱՄՆ դեսպանությունների հետ,
- Համագործակցություն ԵՊՀ, ՀՊՄՀ, Ֆրանսիական համալսարանի և այլ բուհերի հետ,
- Ավարտական և միասնական քննությունների կազմակերպում,
- Կրթության ոլորտում թափուր հաստիքների, անցկացվող մրցույթների և այլ տեղեկատվության հրապարակայնության ապահովում,
- Համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և գույքի համալրում,
- Դպրոցների մասնակի վերանորոգումներ, լոկալ ջեռուցման համակարգերի անցկացման և վերանորոգման աշխատանքներ,
- Շենքային պայմանների բարելավում ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Մ.Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոցի հիմնանորոգում,

- Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար ծրագրի շրջանակներում Ջրառատ համայնքում կառուցվելու է ծանրամարտի մարզադահլիճ,
- Արտիմետի միջնակարգ դպրոցում կառուցվելու է մարզադահլիճ,
- Արագածի, Շահումյանի, Փշատավանի, Սարդարապատի, Ջանֆիդայի, Գետաշենի միջնակարգ և Արմավիրի թիվ 6, Արմավիրի թիվ 8, Վաղարշապատի թիվ 7 հիմնական դպրոցների մարզադահլիճների վերանորոգման աշխատանքների շարունակում,
- Մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության ոլորտում միջոցառումների իրականացում:

2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով կիրականացվեն փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում ծրագրով Արգինայի միջնակարգ դպրոցի կառուցման, ինչպես նաև «Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում ծրագրով՝ Արևիկի համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Ասիական զարգացման բանկի Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով 2021-2023թթ. ընթացքում կիրականացվեն Փարաքարի և Պտղունքի միջնակարգ դպրոցների կառուցման աշխատանքներ:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 2,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. կրթության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 9,447,474.2 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 7 մշտական և 107 ժամանակավոր աշխատատեղ:

6.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

Ոլորտում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղված է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մարզի մշակութային դերի բարձրացմանը, մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանմանը, ազգային արժեքների ու ավանդույթների վերականգմանն ու տարածմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, թանգարանների, գրադարանների, մշակութային այլ օջախների նպատակային գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանն ու առաջընթացին, հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2021թ. ՀՀ պետական բյուջեով մարզպետարանին հատկացվել է շուրջ 37.8 մլն դրամ՝ ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման և մշակութային միջոցառումների իրականացման նպատակով:

Սպորտ և երիտասարդության հարցեր. ՀՀ Արմավիրի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող մարզերից է: Արմավիրի մարզում հենակետային են համարվում չորս մարզաձևեր՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ: Մարզի մարզիկներն ունեն նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ՝ մեդալներ օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի և միջազգային առաջնություններում:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 7,000.0 հազ.դրամ նախնական արժեքով, այդ թվում՝ «Դասավանդիր Հայաստան» ՀԿ-ի և դպրոցի համաֆինանսավորամբ Բագարանի միջնակարգ դպրոցում 24քմ մակերեսով հնագիտության թանգարանի կառուցման դրամաշնորհային ծրագիրը, ինչպես նաև Հայկական համայնքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերակառուցման աշխատանքները և այլն:

2021թ. մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 157,294.2 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 5 մշտական և 78 ժամանակավոր աշխատատեղ:

6.3. Առողջապահություն

Բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը մարզում սահմանվել է որպես ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային օղակի պահպանման և շտապ բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տուբերկուլյոզի, մալարիայի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությունները:

Հաշվի առնելով, որ ՀՀ առողջապահության նախարարի 07.04.2021թ. թիվ 1126–Լ, 02.03.2021թ. թիվ 642-Լ և 27.04.2021թ. թիվ 1458-Լ հրամաններով հաստատվել են «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը», «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը» և «Շաքարային դիաբետի դեմ պայքարի 2021-2026 թվականների միջոցառումների ծրագիրը»՝ ՀՀ մարզերի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրերում ներառել 2021 թվականի համար ՀՀ մարզերում նշյալ ծրագրերով նախատեսված միջոցառումները:

Կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում COVID-19 վարակի նկատմամբ: Պատվաստման հետ կապված աշխատանքների նախապատրաստում և իրականացում:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների, ինչպես նաև քիմիական թունավորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում, համագործակցում լրատվական միջոցների և ՀԿ-ի հետ՝ վերը նշված հիվանդությունների կանխարգելման և ազգաբնակչության շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով: Եռամսյակը մեկ մարզպետարաններում կազմակերպել և իրականացնել

հանդիպումներ, որոնց ժամանակ կքննարկվեն վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության և կանխարգելման հարցերը:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների, մասնավորապես՝ ֆիզիկական թերակտիվության, ճարպակալման, նվազեցմանը, ինչպես նաև առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների և ազգաբնակչության իրազեկման աշխատանքների պլանավորում և իրականացում:

Տարածքային կառավարման մարմինների առողջապահության ոլորտի պատասխանատուների հետ պարբերաբար քննարկել ԲՄՎ-ով պայմանավորված վարակների կանխարգելման, ԱՀԿ-ի IPCAF-գործիքով վարակի հսկողության ծրագրերի գնահատման արդյունքում առկա/հայտնաբերված բացերը և մշակել առաջարկություններ դրանց լուծման և վարակի հսկողության կարողությունների ուղղությամբ:

Արտաընդերային հեպատիտների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով բուժհաստատությունների կարողությունների զարգացում, ախտորոշման արագ թեսթերով ապահովում:

ՀՀ-ում գործող սանիտարական օրենսդրության պահանջների կատարման, ներառյալ վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների սահմանված կարգով շտապ հաղորդման իրականացման ապահովում:

ՀՀ կառավարության 17.12.2020թ. N 2129 որոշմամբ հաստատված «2021-2025թթ. իմունականխարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը» պետական ծրագրով նախատեսված միջոցառումները:

2020 թվականի մարտի 5-ի N 258-Լ որոշմամբ հաստատված «Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագրով» նախատեսված միջոցառումների և ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2015թ. «Մայրական ու պերինատալ մահացության և հիվանդացության նվազեցման նպատակով առողջապահության համաշխարհային կազմակերպության «Մազից կախված՝ կրիտիկական դեպքերի» աուդիտի ներդրման մասին» N 2209-Ա հրամանից բխող աշխատանքների ապահովում:

2021թ. համար պլանավորվել է առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշռի 10% աճ՝ 2020թ.-ի համեմատ:

2021թ. վճարովի ծառայությունների աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործառույթները.

1) Ստվերային շրջանառության բացառում,
2) Բուժման բավարար պայմանների ապահովման նպատակով կենտրոնի ստացիոնար բաժանմունքների ընթացիկ և կոսմետիկ վերանորոգում,
3) Բարոյապես մաշված բժշկական սարքավորումների և կահույքի փոխարինում նորով,
4) Նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրում (հատկապես ռենտգեն սարքավորում),
5) Կադրային համալրում՝ վիրաբույժ, մանկաբույժ, անեսթեզիոլոգ,
6) Մատուցվող ծառայությունների գների վերանայում,
7) Պետական պատվերի ձևավորման եղանակի վերանայում՝ այն համապատասխան գործակցով կապելով վճարովի ծառայությունների հետ:

2021թ. ընթացքում նախատեսվում է մարզում գործող բժշկական կենտրոնները հագեցնել ժամանակակից նորագույն բժշկական սարքավորումներով և գործիքներով, ներդնել և զարգացնել ժամանակակից բժշկության նոր մեթոդներ և համակարգեր:

2021թ. տարեկան գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացումները կազմում է 3.0 մլրդ դրամ:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 3,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. առողջապահության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 3,042,000.0 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 16 ժամանակավոր աշխատատեղ:

6.4. Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական ծառայութունների մատչելիությունը համարվում է զարգացման հիմնական նպատակը:

2021թ. նախատեսվում է շարունակել ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 29-ի N 1601-Լ որոշման N2 հավելվածով հաստատված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի միջոցառումների ցանկով մարզպետարանին վերապահված գործողությունները:

2021թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մարզում պլանավորված ծրագրերը և միջոցառումներն են.

- Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց համար մասնագիտական ուսուցման կազմակերպում,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում,
- Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,
- Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում.

  ա) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,

  բ) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում,
- Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում,

- Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում,
- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում,
- Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում:

2021թ. մարզում կշարունակվեն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում իրականացվող ծրագրերը:

2021թ. մարզում զբաղվածության կարգավորման պետական բոլոր ծրագրերում կընդգրկվեն 397 շահառուներ, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձինք՝ 14, ոլորտում նախատեսվում է իրականացնել շուրջ 190,867.5 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 1,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. սոցիալական պաշտպանության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 2,841,862.7 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 21 ժամանակավոր աշխատատեղ:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1. Ճանապարհաշինություն

ՀՀ Արմավիրի մարզն ամենախիտ ճանապարհային ցանց ունեցող մարզն է, որի ճանապարհային խտության բարձր աստիճանը կապված է միջպետական և տեղական ճանապարհների բարձր խտությամբ:

ՀՀ Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց, մարզի բնակչության 99%-ն ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Ոլորտի թույլ կողմերն են՝ տրանսպորտային միջոցների մաշվածությունը, ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը, հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված ծառայությունների բացակայությունը: Ոլորտում առաջնային է ճանապարհների հիմնանորոգման հարցը, ինչպես նաև միջպետական, հանրապետական, մարզային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը:

2021թ. ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 68,800.0 հազ. դրամ՝ մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար:

2021թ. նախատեսվում է համայնքների սուբվենցիոն ծրագրերով իրականացնել փողոցների ասֆալտապատման և սալիկապատման աշխատանքներ:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 15,000.0 հազ. դրամ նախնական արժեքով, այդ թվում՝

- Տ-3-15, /Հ-15/ - Ալաշկերտ (Տ-3-14) ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 հատվածի հիմնանորոգում
- Տ-3-76, Զարթոնք - Արտաշար /Տ-3-54/ ավտոճանապարհի կմ0+000-կմ2+100 հատվածի հիմնանորոգում
- Մ-5, Երևան - Արմավիր - Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհից դեպի «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ բեռնային համալիր տանող 1.7 կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգում.
- Մ-5, Երևան-Արմավիր ճանապարհի կմ24+000-կմ24+760 հատվածի (Հովտամեջ և Ծիածան համայնքների մոտ) հիմնանորոգում
- Լուկաշին-Հ17 (3.15 կմ) ճանապարհահատվածի վերականգնում՝ կենսական նշանակության ճանապարհների վերականգնման ծրագիր՝ Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ և այլն:

2021թ. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը, մասնավորապես՝

-«Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագիր, որի շրջանակներում կիրականացվեն դասընթացներ տարբեր տեխնոլոգիական ուղղություններով:

-«Գաղափարից մինչև բիզնես» 2021 թվականի դրամաշնորհային ծրագիր, որի բաղադրիչներից մեկը «Մարզային համաչափ զարգացման փաթեթն» է:

-«Վիրտուալ կամուրջ» ծրագրի մարզային բաղադրիչը, որը բացառիկ հնարավորություն է մարզերի սկսնակ ձեռներեցների համար մասնակցելու աքսելերացիոն ծրագրին, ձեռք բերելու ձեռնարկատիրական հմտություններ, ծանոթանալու աշխարհում տեղի ունեցող տեխնոլոգիական զարգացումներին և տենդենցներին, զարգացնելու տեխնոգաղափարները:

-ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» (ԱԽՈԵ) ծրագիր շրջանակներում ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում դրամաշնորհների տրամադրման ծրագիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվայնացումը ՀՀ-ում ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտ է, առկա է թվային հմտությունների լուրջ բացեր հասարակության տարբեր խմբերի մոտ՝ նախատեսվում է իրականացնել մարզի բնակչության տարբեր խմբերի շրջանում թվային բաղադրիչի ներդրմամբ ու շարունակական ընդլայնմամբ ուղեկցվող թվային կրթության և կիբեռգրագիտության ուսուցման ծրագրեր:

2021թ. ճանապարհաշինության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 1,537.687.3 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 238 ժամանակավոր աշխատատեղ:

7.2. Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների շուրջ 52%-ում առկա է շուրջօրյա ջրամատակարարում:

Ոլորտի թույլ կողմն է՝ մարզի համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածության խնդիրը, իսկ որպես սպառնալիք՝ ջրամատակարարման համակարգի կախվածությունը էլեկտրաէներգիայից:

2021թ. կշարունակվի «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3-Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագիրը, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերի վերանորոգում և անհատական ջրաչափերի տեղադրում և Մարգարա համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 934,373.9 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 62 ժամանակավոր աշխատատեղ:

7.3. Գազամատակարարում

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից է: Մարզի 97 համայնքներից 89-ը գազաֆիկացված են: Չգազաֆիկացված համայնքներն են՝ Արաքս (էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Լեռնամերձ, Երվանդաշատ, Բագարան, Արգինա, Կողբավան:

2021թ. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մարզի համայնքներում նախատեսվում են իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. ակնկալվում է, որ մարզի չգազաֆիկացված որոշ համայնքներում ևս կտեղադրվեն արևային կայաններ:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. գազամատակարարման բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 542,597.0 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 98 ժամանակավոր աշխատատեղ:

7.4. Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակներից է շենք-շինությունների, փողոցային լուսավորության և տարբեր նշանակության օբյեկտների էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացումը:

2021թ. մարզում կշարունակվեն ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման, ինչպես նաև Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի աջակցությամբ իրականացվող «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում» վարկային ծրագրերը:

2021թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «ՀԷՑ» ՓԲԸ-ների կողմից Արմավիրի մարզում նախատեսվում է իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 5,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. էներգետիկայի բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 46,183,068.9 հազ. դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 88 ժամանակավոր աշխատատեղ:

VIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգումը, համայնքների գլխավոր հատակագծերի, շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

2021թ. նախատեսվում է համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնել ոլորտային ծրագրեր:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 10,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. քաղաքաշինության բնագավառում մարզում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի շուրջ 138,402.0 հազ.դրամ: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում կստեղծվի 2 մշտական և 67 ժամանակավոր աշխատատեղ:

IX. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1. Տարածքային կառավարում

Մարզի երրորդ ռազմավարական նպատակն է՝ մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը:

2021թ. տարածքային կառավարման ոլորտի առաջնահերթություններն են՝

- Մարզային և տեղական դերակատարների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստումների կազմակերպում,
- Հանրապետական միջոցառումներին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովում.
- Մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացում,
- Մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառում, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգում և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու նպատակով սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպում:

2021թ. կշարունակվեն մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության իրականացման աշխատանքները:

2021թ. արտաքին կապերի բնագավառում կշարունակվեն համագործակցությունը նախկինում հաստատված կապերով, ինչպես նաև քայլեր կձեռնարկվեն նոր կապերի ստեղծման՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացման համար:

2021թ. պետական բյուջեով հատկացվել է 588,115.1 հազ. դրամ ՀՀ Արմավիրի մարզում տարածքային պետական կառավարման ապահովման համար:

9.2. Տեղական ինքնակառավարում

2021թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.

-Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպում,

-Նոր ձևավորվող համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացում,

-ՏԻՄ ընտրությունների արդյունքում նոր համայնքի ղեկավար ընտրված համայնքների, ինչպես նաև նոր ձևավորվող համայնքների զարգացման ծրագրերի մշակում:

2021թ. համայնքներին տրամադրվող դոտացիաների չափը կազմում է 5,696,629.4 հազ. դրամ:

2021թ. ընթացքում նախատեսվում է շարունակել համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների անցկացման աշխատանքները:

9.3. Քաղաքացիական հասարակություն

2021թ. նախատեսվում է շարունակել համագործակցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ հասարակական, միջազգային կազմակերպություն-ների, զանգվածային լրատվամիջոցների, համայնքային միավորումների հետ:

2021թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության կարևոր ուղղություններից մեկը կլինի հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային և համայնքային զարգացման գործընթացներին: Համայնքների բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովումը:

9.4. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն

Մարզում տեխնածին արտակարգ իրավիճակների ծագման հիմնական սպառնալիք են համարվում ՀԱԷԿ-ի, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների, քիմիական վտանգավոր օբյեկտներում առաջացած, հրդեհապայթունավտանգ օբյեկտների վթարները, ինչպես նաև կենցաղային հրդեհները:

Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում: Կարկուտի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կայանների և ցանցերի տեղադրման աշխատանքները:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

ՀՀ Արմավիրի մարզում շարունակվում են իրականացվել սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներ՝ համաձայն ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի (ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի N429 որոշում)՝ պետական բյուջետային ֆինանսավորման սահմաններում և առկա կադրային ռեսուրսներով: ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման մասին» N 1351-Ն որոշմամբ ծրագրի շահառուներ են հանդիսանում ՀՀ մարզերն ու համայնքները:

2021 թվականին նախատեսված են հստակ միջոցառումներ ուղղված նշված խնդիրների լուծմանը՝

1) ազդարարման, տարահանման և պատսպարման հարցերով բնակչության իրազեկվածության ապահովում,
2) մարզի բնակչության ազդարարման համակարգի արդիականացում և վերազինում,
3) համայնքներում և կազմակերպություններում բնակչության և աշխատակիցների պատսպարման համար նախատեսված պաշտպանական կառույցների սպասարկման կազմավորումների ստեղծում,
4) մարզային և համայնքային բյուջեներում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում միջոցառումների իրականացման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսում,
5) մարզպետի և համայնքների ղեկավարների կառավարման կետերի վերանորոգում և վերազինում,
6) հաշվառված հրշեջ հիդրանտների և հրշեջ ծորակների սարքինության, համապատասխանության և բավարար քանակի ապահովում,
7) հրդեհային կանխարգելման աշխատանքների իրականացում (խոտհունձ, վերահսկվող կրակ, ոռոգման համակարգերի կանոնավոր աշխատանք, հակահրդեհային պատնեշների կառուցում և այլն),
8) հանրակրթական դպրոցների և համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման գործընթացի ուղղությամբ աշխատանքների իրականացում,
9) մարզերի բնակչության պատսպարման հնարավորությունների ավելացում, մարզի բազմաբնակարան շենքերի նկուղների հաշվառում, բազմաբնակարան շենքերի նկուղներում բնակչության կցագրման հաշվարկների ճշգրտում,
10) մարզի բոլոր մակարդակների ՔՊ պլանների, պլան-ժամանակացույցերի և տարահանման հաշվարկների ճշգրտում՝ դրանք դարձնելով իրատեսական, հատուկ ուշադրություն դարձնելով ՔՊ ծառայությունների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի համալրվածությանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային և զորահավաքին ներգրավվածության առանձնահատկությունները:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2021թ. կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագիր,
- ՀՀ պետական հատուկ նշանակության ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիր,
- Կամավորական հրշեջ հենակետերի հիմնում:

2021թ. ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում և մանկապարտեզներում նախատեսվում են սեյսմապաշտպանության վարքականոնների ուսուցման, ուսումնական տագնապ–վարժանքների, իսկ մարզպետարանի, համայնքապետարանների աշխատակիցների համար՝ սեյսմապաշտպանության թեմայով իրազեկման բարձրացման աշխատանքների կազմակերպում և իրականացում:

2021թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել մի շարք ոլորտային ծրագրեր 2,000.0 հազ. դրամ նախնական արժեքով:

2021թ. տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության ոլորտների ընդհանուր բյուջեն կազմում է 6,290,524.5 հազ.դրամ:

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը մշտադիտարկման կենթարկվի ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և մարզի ռազմավարական նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչները կիսամյակային և տարեկան կտրվածքով կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից, արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

2021 թվականի գործունեության ծրագրի մշտադիտարկման համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

Մշտադիտարկման տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների արդյունքները: Այն կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

1. տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները,
2. հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

Մշտադիտարկման տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ծրագրի արդյունքներն ամփոփող խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները:

XI. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Արմավիրի մարզի 2021 թվականի գործունեության ծրագրի իրագործման նպատակով պահանջվող ֆինանսական միջոցները և դրանց ծախսման ուղղությունները գնահատվել են. արդյունքում նախատեսված ծրագրերի արժեքը կազմում է **78,000,055.4** հազ. դրամ, որից՝

- **պետական բյուջե** **68,212,611.5 հազ.դրամ**
  -սեփական միջոցներ *22,185,781.2 հազ.դրամ*
  -վարկային միջոցներ *46,026,830.2 հազ. դրամ*
- **միջազգային և դոնոր կազմակերպություններ** **38,000.0 հազ.դրամ**
- **համայնքային բյուջե** **1,466,000.0 հազ.դրամ**
- **մասնավոր ներդրողներ** **8,208,444.0 հազ. դրամ**
- **այլ աղբյուրներ** **75,000.0 հազ.դրամ**:

2021 թվականին նախատեսվում է ստեղծել 30 մշտական և 913 ժամանակավոր աշխատատեղ:

XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

\

Հավելված 1 *- ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի ցրամաբանական հենք*

Հավելված 2 *- ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը՝ ըստ ոլորտների*

Հավելված 3 *- ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված բոլոր ոլորտների ամփոփ ֆինանսավորումը*

Հավելված 4 *- ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությամբ չպլանավորված աշխատանքներ*